ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

N 442
20 հոկտեմբերի 2020թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Մեծարգո պարոն Մաթևոսյան

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 12-ի <<Համայնքի 2020 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> թիվ 124-Ա որոշումը:

Առդիր 60 /վաթսուն/ թերթ:

Համայնքի ղեկավար **Լ. Գրիգորյան**

Կատ.՝ Ա.Սաֆարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 27-20605-2020
27 10 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2020 թվականի N 124-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N58-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի <<Համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N58-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը՝

1) 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4511 հոդվածով նախատեսված գումարից պակասեցնել 2 500 000 ՀՀ դրամ և այն ուղղել հետևյալ հոդվածներին՝

1.1) 500 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

1.2) 1 000 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4267 հոդվածին.

1.3) 1 000 000 ՀՀ դրամն ուղղել 10 բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4729 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2020 թվականի հոկտեմբերի 12

հ. Մերձավան